ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» ---------- 2016թ. **N-----Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Երևանի քաղաքապետի եզրակացությունը, հիմք ընդունելով Հայաստանի նկարիչների միության նախագահի գրությունը, ղեկավարվելով ‹‹Գույքահարկի մասին›› Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի թիվ 822-Ն որոշմամբ՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի նկարիչների միության անդամ նկարիչներին սեփականության իրավունքով պատկանող՝ գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող, Երևան քաղաքի վարչական տարածքում գտնվող շինությունների մասով (ստեղծագործական արվեստանոցներ) տրամադրել գույքահարկի գծով արտոնություն՝ 1.939.500 /մեկ միլիոն ինը հարյուր երեսունինը հազար հինգ հարյուր / դրամ գումարի չափով՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի նկարիչների միության անդամ նկարիչներին սեփականության իրավունքով պատկանող՝ գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող, Երևան քաղաքի վարչական տարածքում գտնվող շինությունների մասով (ստեղծագործական արվեստանոցներ)՝ 27.04.2016թ. դրությամբ գույքահարկի գծով հարկային պարտավորությունները կազմում են 1.939.500 դրամ, որի համար 22.03.2016թ. հ. 27 գրությամբ Հայաստանի նկարիչների միության նախագահը դիմել է Երևանի քաղաքապետին՝ գույքահարկի արտոնություն ստանալու խնդրանքով:

ՀՀ քաղաքաշինության նախարարի և ՀՀ անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարչության պետի 26.05.1998թ. թիվ 108-Կ հրամանի 2-րդ կետի համաձայն՝ արվեստանոցները ներառված են հասարակական նշանակության շինությունների ցանկում և «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ նույնպես համարվում են գույքահարկով հարկվող օբյեկտ և նույն օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ սահմանվում է միևնույն հարկման դրույքաչափը (կադաստրային արժեքի 0.3%) ինչպիսին է սուպերմարկետների և շահույթի նպատակ հետապնդող այլ հասարակական նպատակային նշանակության շինությունների համար:

Հիմք ընդունելով Հայաստանի նկարիչների միության նախագահի գրությունը և ղեկավարվելով «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով ու ՀՀ կառավարության 2012 թվականի թիվ 822-Ն որոշմամբ՝ Երևան քաղաքի ավագանին 25.12.2012թ. հ.583-Ա որոշմամբ Հայաստանի նկարիչների միության թվով 45 անդամներին, սեփականության իրավունքով պատկանող՝ գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող, Երևան քաղաքի վարչական տարածքում գտնվող շինությունների մասով՝ (ստեղծագործական արվեստանոցներ) սահմանել է արտոնություն՝ 2.469.647 դրամ, 10.12.2013թ. հ.88-Ա որոշմամբ 38 անդամներին սեփականության իրավունքով պատկանող՝գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող, Երևան քաղաքի վարչական տարածքում գտնվող շինությունների մասով ՝ սահմանել է արտոնություն՝786.680 դրամ և 26.11.2014թ. հ.252-Ա որոշմամբ 36 անդամներին սեփականության իրավունքով պատկանող՝գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող, Երևան քաղաքի վարչական տարածքում գտնվող շինությունների մասով՝ 713.132 դրամ ընդհանուր գումարի չափով:

Կարևորելով նկարիչների կողմից կատարված աշխատանքների դերն ու նշանակությունը՝ առաջարկվում է գույքահարկի գծով արտոնություն տրամադրել Հայաստանի նկարիչների միության անդամ նկարիչներին սեփականության իրավունքով պատկանող՝ գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող, Երևան քաղաքի վարչական տարածքում գտնվող շինությունների (ստեղծագործական արվեստանոցներ) գույքահարկի գծով հարկային պարտավորությունների մասով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում Հայաստանի նկարիչների միության անդամ նկարիչներին սեփականության իրավունքով պատկանող՝ գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող, Երևան քաղաքի վարչական տարածքում գտնվող շինությունների մասով «Գույքահարկի արտոնություն սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան քաղաքի վարչական տարածքում գտնվող Հայաստանի նկարիչների միության անդամ նկարիչներին սեփականության իրավունքով պատկանող՝ գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող, շինությունների (ստեղծագործական արվեստանոցներ) գույքահարկի գծով հարկային պարտավորությունները 27.04.2016թ. դրությամբ կազմում է 1.939.500 /մեկ միլիոն ինը հարյուր երեսունինը հազար հինգ հարյուր /դրամ, որի համար դիմել են Երևանի քաղաքապետին՝ օրենքով սահմանված կարգով գույքահարկի արտոնություն ստանալու խնդրանքով:

Հաշվի առնելով միության նախագահի կողմից ներկայացված գրությունը՝ գույքահարկի գծով հարկային պարտավորությունների մասով արտոնություն ստանալու վերաբերյալ, նպատակահարմար եմ գտնում տրամադրել 1.939.500 /մեկ միլիոն ինը հարյուր երեսունինը հազար հինգ հարյուր / դրամի չափով գույքահարկի գծով արտոնություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ Հ.1

«ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Գույքահարկի արտոնություն սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առընչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ Հ.2

«ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Գույքահարկի արտոնություն սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունմամբ Երևան քաղաքի 2016 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2016 թվականի ----------
N ____ "_____" Ա որոշման

Ց Ա Ն Կ

ՀՆՄ անդամ նկարիչներին սեփականության իրավունքով պատկանող՝ գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող, Երևան քաղաքի վարչական տարածքում գտնվող շինությունների (ստեղծագործական արվեստանոցների) գույքահարկի գծով հարկային պարտավորությունների վերաբերյալ

Հ/Հ	Վարչական շրջան	Ազգանուն, Անուն փաստ. սեփ.	Հասցե	ՀՎՀՀ	շին. նպատ. նշանակ/ գր. Ամսաթիվ	Գույքահարկի պարտավորություններ առ. 27.04.2016
1	Աջափնյակ	Ադալյան Ռուբեն	Լենինգրադյան 4	L0003987	հաս. 13.11.2006	85,243
2	Աջափնյակ	Ասատրյան Տիգրան	Լենինգրադյան 4/60	L0013460	հաս. 02.10.2006	81,732
3	Աջափնյակ	Պետրոսյան Վլադիմիր	Լենինգրադյան 48/4	L0004086	հաս. 30.05.1997	12,020
4	Աջափնյակ	Շուգարով Անդրեյ	Լենինգրադյան 4/58Ա	83870978	հաս. 14.12.1992	43,664
5	Աջափնյակ	Հայրապետյան Հրաչիկ	Հալաբյան 43	L0004063	հաս. 20.12.1993	19,791
6	Աջափնյակ	Սիմոնյան Ֆրանց	Մարգարյան 27 հ.3	85066491	հաս. 19.09.2008	9,059
7	Աջափնյակ	Փաշոյան Նարգիզ	Լենինգրադյան 32/14-15	83832698	հաս. 02.02.2007	21,791
8	Աջափնյակ	Վարդանյան Լավրենտ	Արզումանյան 20	L0004187	հաս. 25.12.1992	7,264
9	Աջափնյակ	Աղաջանյան Արամ	Հալաբյան 35	L0004024	հաս. 11-05-1993	38,675
10	Աջափնյակ	Բերնեցյան Ալեքսանդր	Շիրազի 40	84027941	հաս. 23-06-2003	13,382
11	Արաբկիր	Անտաշյան Վլադիմիր	Բաղրամյան 31ա	G0006728	հաս. 06.06.2005	20,000
12	Արաբկիր	Բաղդասարյան Աշոտ	Կիևյան 26	G0003680	հաս. 31.12.2002	15,336
13	Արաբկիր	Բաղդասարյան Գետիկ	Քոչար 13/6	G0002412	հաս. 27.01.2009	29,649
14	Արաբկիր	Գասպարյան Էդուարդ	Քոչար 13/88	G0002381	հաս. 21.04.2004	33,278
15	Արաբկիր	Զարդարյան Անահիտ	Կիևյան 24	G0003517	հաս. 26.07.2004	36,686
16	Արաբկիր	Թորոյան Արմենուհի	Քոչար 13/3	80740272	հաս. 31.12.2004	52,468
17	Արաբկիր	Գալստյան Վահագն	Քոչար 13 / 37	G0004142	հաս. 15-10-2004	57,674

18	Արաբկիր	Խորենյան Սուրեն	Կոմիտաս 19/11	G0050213	հաս. 25.01.2016	15,542
19	Արաբկիր	Հախյան Լյովա	Քոչար 13/104	80813551	հաս. 31.12.2004	33,148
20	Արաբկիր	Համալբաշյան Սարգիս	Քոչար 13/50	G0002383	հաս. 31.12.2002	31,927
21	Արաբկիր	Հակոբյան Տարիել	Կոմիտաս 11	80344499	հաս. 31-12-2004	39,227
22	Արաբկիր	Հարությունյան Հովհաննես	Քոչար 13 / 62	80728897	հաս. 31-12-2004	73,655
23	Արաբկիր	Հովսեփյան Արտաշես	Գյուլբեկյան 33	G0003881	հաս. 31-12-2003	47,871
24	Արաբկիր	Ղազարյան Սամվել	Քոչար 13 / 10	G0003731	հաս. 31-12-2003	66,184
25	Արաբկիր	Սարգսյան Արարատ	Փափազյան 17Ա/59	80741722	հաս. 27.06.2005	58,865
26	Արաբկիր	Սիրավյան Գագիկ	Փափազյան 17ա/56	80805546	հաս. 31-12-2004	55,397
27	Կենտրոն	Աղամյան Կարեն	Կորյունի 1նրբ. 10 բն.2/1	86656452	հաս. 11.03.2008	56,085
28	Կենտրոն	Ավետյան Անատոլի	Բաղրամյան 1փակ 14	80252853	հաս. 12.11.1992	32,030
29	Կենտրոն	Բդեյան Հմայակ	Կողբացու 42/113	86675042	հաս. 08.07.2008	301,904
30	Կենտրոն	Զաքարյան Վիլիկ	Բաղրամյան 1փակ 14	80703322	հաս. 06.08.1992	14,090
31	Կենտրոն	Միրզոյան Զոհրաբ	Դեմիրճյան 27	87063235	հաս. 01.07.1995	33,807
32	Կենտրոն	Քոլոզյան Արմեն	Դեմիրճյան 27 շենք բն. 32Ա	87063243	հաս. 11.08.2006	36,234
33	Կենտրոն	Սարգսյան Բաղդասար	Սարյան 20/1	84702446	հաս. 28.04.1993	35,345
34	Կենտրոն	Սարգսյան Ռաֆիկ	Սարյան 20/1	84824681	հաս. 06.03.1993	53,088
35	Մալաթիա-Սեբաստիա	Բաղալյան Աշոտ	Իսակովի 42 հ.1	F0009294	հաս. 10.09.2007	31,248
36	Մալաթիա-Սեբաստիա	Բաղումյան Գրիգոր	Բ/2 թաղ 130	85476004	հաս. 14.08.2003	16,474
37	Մալաթիա-Սեբաստիա	Գուլիկյան Վարդգես	Բաբաջանյան 165/1ա	85470059	հաս. 01.10.1992	16,613
38	Մալաթիա-Սեբաստիա	Միսկարյան Կարինե	Բ-1թաղ 32/18	85346912	հաս. 21.12.1994	8,413
39	Մալաթիա-Սեբաստիա	Պետրոսյան Վիլյամ	Բ/2 թաղ 71	F0009295	հաս. 14.08.2003	44,493
40	Մալաթիա-Սեբաստիա	Սևոյան Հովնան	Իսակովի 44/1 17	85335787	հաս. 16.08.2002	12,898
41	Մալաթիա-Սեբաստիա	Մկրտչյան Մկրտիչ	Բաբաջանյան փ. 49/1 - 33	85336377	հաս. 22.02.2002	46,354
42	Մալաթիա-Սեբաստիա	Հարությունյան Յուրիկ	Ռաֆֆու փող. 33- 42	F0001572	հաս. 23.11.1992	51,450

43	Մալաթիա-Սեբաստիա	Ղազարյան Գագիկ	Բ-2 Թաղ. 51 շենք հ.1	85112914	հաս. 25.10.2005	38,090
44	Նոր Նորք	Աղաբեկյան Հայկ	Շոպրոնի 3նրբ թ.34	C0003824	հաս. 08.10.1992	6,968
45	Նոր Նորք	Դավիդովա Մանե	Նորքի 6զ հ. 6	C0004518	հաս. 02.09.2003	7,052
46	Նոր Նորք	Հովսեփյան Հրանտ	Շոպրոնի 3նրբ 3/32	C0003822	հաս. 12.04.1993	7,448
47	Նոր Նորք	Մարգարյան Մարատ	Բաղյան 9	C0014960	հաս. 24.08.2005	6,868
48	Նոր Նորք	Միրզոյան Հրանտ	VI մ/շ, Շոպրոնի 3նրբ 21	C0003826	18.11.1992	9,136
49	Նոր Նորք	Ռիզեր Վովա	VI մ/շ, 5 շենք	C0004133	հաս. 19.04.1993	17,074
50	Քանաքեռ-Զեյթուն	Ավետիսյան Ավետիք	Ահարոնյան 20 թիվ 50	D0006053	հաս. 31.12.2004	9,667
51	Քանաքեռ-Զեյթուն	Հակոբյան Խորեն	Ռուբինյանց 17	D0003555	հաս. 31.12.2004	9,213
52	Քանաքեռ-Զեյթուն	Դավթյան Գարեգին	Տիգրանյան 5/3	D0003822	հաս. 31.12.2004	37,930
ԸՆԴԱՄԵՆԸ						**1,939,500**